

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 10/6

15 մարտի 2016 թ.

Քննարկվեց «Վանաձորի զբաղվածության կենտրոն» ՊՈԱԿ 15.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 03.02.2016թ-ի թիվ 133/09 որոշման դեմ:

#### **«Վանաձորի զբաղվածության կենտրոն» ՊՈԱԿ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետից ստացված 05.02.2016թ. թիվ 133/09 որոշմամբ Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնը (այսուհետ՝ ՎՋՏԿ) ունի 673.467 դրամի չկատարած հարկային պարտավորություն, որից եկամտային հարկի ապառք 440.424 դրամ, տույժ 231.841 դրամ և սոցիալական վճար՝ 1.202 դրամ:

ՎՋՏԿ-ն հանդիսանում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի, զբաղվածության պետական գործակալության ստորաբաժանում: Մինչև 01.03.2015թ. կենտրոնի պահպանման ծախսերի հաշվապահական վարումն իրականացվել է ՎՋՏԿ-ում, որից հետո գործառույթը կենտրոնացվել է զբաղվածության պետական գործակալության հաշվապահական հաշվառման բաժնում: ՎՋՏԿ-ում իրականացվում են զբաղվածության պետական կարգավորման ամենամյա պետական ծրագրեր, որոնց հետ կապված հաշվապահական հաշվարկները, գանձապետական փոխանցումները և հարկային բոլոր պարտավորությունները կատարվում են կենտրոնի կողմից:

ՎՋՏԿ-ն փաստացի պարտաճանաչ հարկ վճարող է, բոլոր հարկային փոխանցումները կատարում է ժամանակին, չունի եկամտային հարկի և սոցիալական վճարի գծով պարտքեր, որը հիմնավորվում է ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի տեղեկանքներով:

2014թ-ին ՎՋՏԿ-ի տեխնիկական հնարավորությունները թույլ չեն տվել ներդնելու taxservice.am ծրագիրը, հարկային գրանցման հայտերն ու հաշվետվություններն ուղարկվել են Վանաձորի հարկային սպասարկման կենտրոնից: 2015թ. ապրիլ ամսին զբաղվածության պետական գործակալության հաշվապահական հաշվառման բաժինը պահանջել է տեղեկանք՝ ՎՋՏԿ-ի պարտք ու ապառքի մասին: 01.04.2015թ. Վանաձորի ՏՀՏ-ն տրամադրել է տեղեկանք, որտեղ առկա է 536.615 դրամ դեբետային մնացորդ, որից հետո հայտնաբերվել է, որ 2014թ. հունիս ամսվա հաշվետվությունը անհասկանալի պատճառներով (հնարավոր է կապի խափանման) բազայում առկա չէ: 20.04.2015թ. կրկին ուղարկվել է հաշվետվությունը: 14.05.2015թ. Վանաձորի ՏՀՏ-ից կրկին վերցվել է տեղեկանք, որի համաձայն դեբետային մնացորդը կազմել է 26.528 դրամ: Հաշվետվությունը ուշացնելու համար 17.06.2015թ. վճարվել է վարչական տուգանք, տեղեկացվել է, որ ՎՋՏԿ-ն այլևս խնդիրներ չունի, որը նաև հիմնավորվում է ՏՀՏ-ից

ստացված տեղեկանքներով: Հետագայում պատշաճ չի տեղեկացվել կուտակված պարտքի մասին:

Կրկին անգամ հիշեցվում է, որ ՎՋՏԿ-ի բոլոր հարկային պարտավորությունները կատարվել են ժամանակին, ներառյալ 2014թ. հունիս ամիսը:

ՎՋՏԿ-ն որպես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, զբաղվածության պետական գործակալության ստորաբաժանում, ներկա պահին չունի առանձին հաստատված նախահաշիվ, քանի որ հաշվապահությունը վարվում է կենտրոնացված համակարգով և վերջինս չի իրականացնում պահպանման ծախսերի գծով գործառույթներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանաձորի ՋՏԿ-ն չունի չկատարած հարկային պարտավորություն զբաղվածության պետական ծրագրերի մասով, օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, առանց ուշացումների փոխանցվել է եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվարկված գումարները, և հիմնվելով ՏՀՏ-ի կողմից տրամադրված տեղեկանքների վրա, որտեղ նշում չկա տույժ ու տուգանքների մասին, և վարչական տուգանքը վճարելուց հետո ՏՀՏ-ի աշխատակցի հավաստիացումը, որ այլևս ֆինանսական խնդիր չկա, Վանաձորի զբաղվածության կենտրոնը խնդրում է վերանայել որոշումը և ազատել հաշվետվությունը չներկայացնելու համար հաշվարկված տուգանքը վճարելու պարտավորությունից:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «Վանաձորի զբաղվածության կենտրոն» ՊՈԱԿ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 02.02.2016թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 673.467 դրամ, որից եկամտային հարկի ապառք 440.424 դրամ, տույժ 231.841 դրամ, սոցիալական վճարի գծով տույժ 1.202 դրամ: Նշված պարտավորություններն առաջացել են եկամտային հարկի 2015թ-ի օգոստոս, սեպտեմբեր ամիսների հաշվարկներից և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 03.02.2016թ-ին ընդունվել է թիվ 133/09 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Վանաձորի զբաղվածության կենտրոն» ՊՈԱԿ-ից 673.467 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես

էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:

Տվյալ դեպքում «Վանաձորի զբաղվածության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014թ. հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը մինչև 20.07.2014թ. ներկայացվելու փոխարեն, այն փաստացի ներկայացվել է 20.04.2015թ-ին: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով 2014թ. հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար հաշվարկվել է տուգանք: Մասնավորապես, 2014թ. հունիս ամսվա եկամտային հարկը կազմել է 509.323 դրամ, որի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվել է տուգանք՝ գումարով 432.925 դրամ:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի երրորդ պարբերության համաձայն՝ հարկային պարտավորությունները (այդ թվում՝ կանխավճարները) հաշվառվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով (այսինքն՝ տվյալ հարկային պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ անկախ հաշվարկների (հայտարարագրերի, հաշվետվությունների) ներկայացման ամսաթվից:

Ինչ վերաբերվում է 01.04.2015թ. դրությամբ եկամտային հարկի անձնական հաշվի քարտում առկա 536.615 դրամ գերավճարին, ապա այն առաջացել է 2014թ. հունիս ամսվա հաշվակը չներկայացնելու հետևանքով, իսկ սոցիալական վճարի անձնական հաշվի քարտում առկա 144.509 դրամ գերավճարը 16.02.2016թ-ին հաշվանցվել է եկամտային հարկի պարտավորությունների դիմաց:

Միևնույն ժամանակ նշվեց, որ 17.02.2016թ-ին «Վանաձորի զբաղվածության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Վանաձորի ՏՀՏ են ներկայացվել եկամտային հարկի նպատակային վճարված լինելու վերաբերյալ վճարման հանձնարարագրերի կրկնօրինակները: Վերջիններիս ուսումնասիրության և վճարումների նպատակային համապատասխան փոփոխությունները կատարվելուց հետո «Վանաձորի զբաղվածության կենտրոն» ՊՈԱԿ-ի հարկային պարտավորությունները 01.03.2016թ. դրությամբ կազմել են 274.085 դրամ, որից տույժ՝ 13.737 դրամ, տուգանք՝ 260.348 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ռ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 03.02.2016թ-ի թիվ 133/09 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգառը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

